ՆՈՐ-ԴԱՐ

№ 56 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի 12 Ապրիլի 1888 Երեքշաբթի 12 Ապրիլի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 56

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր. 50 կ., հատը՝ 5 կոպէկ:
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція «Норъ-Даръ»
կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով:
Յայտարարութիւնների գինն 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն — Լուրեր։ Նամակ խմբագրին։
Քաղաքական. — Լուրեր։
Խառն Լուրեր.
«Նոր-Դար»-ի հեռագիրներ։
Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Ապրիլի 15-ին, ուրբաթ օրը քաղաքիս երրորդ մասի հաշտարար դատարանում պիտի քննուի կուկիայի ս. Աստուածածնի (Թանդոյենց) եկեղեցիի միարան քահանայի նոյն եկեղեցիի երեցփոխան պ. Գ. Գույոչեանի դէմ գործը։ Մենք յիշեալ քահանայի և երեցփոխանի մէջ պատահած դէպքը իւր ժամանակին յիշելով, հրաւիրել էինք հոգևոր իշխանութեան ուշադրութիւնը դրա վերայ։ Եկեղեցիի բակում քահանայի և երեցփոխանի մէջ տեղի ունեցած վէճի քննութիւնը և այդ մասին արդար անօրինութիւնը, մեր կարծիքով, ամենից առաջ կը վերաբերի հոգ. իշխանութեան, քանի որ թէ քահանան և թէ երեցփոխանը եկեղեցիի մէջ պաշտօն վարելով, ուղղակի ենթարկվում են հոգևոր իշխանութեանը։ Այդ պատճառով չենք հասկանում, թէ ինչու հոգևոր իշխանութիւնը քահանային և երեցփոխանին դատարան է ուղարկել իրանից հեռացնելով գործը։

Մենք այնպէս ենք կարծում, որ հոգևոր իշխանութիւնը պէտք է գործը խստիւ քննէր, մինչև անգամ եթէ երկու կողմն միմեանց դէմ չգանգատուելով հաշտուած լինէին. այդ պահանջում է արդէն կարգապահութիւնը և եկեղեցու շահերը։ Գործը արդարութեամբ քննելով մեղաւոր կողմը պէտք է տուժէ. եթէ քահանան է մեղաւորը, պէտք է պատժուի, եթէ երեցփոխանն է՝ պէտք է պաշտօնից զրկուի։

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ. — Ապրիլի 3-ի գիշերը, անյայտ չարագործներ կոտրելով մեր քաղաքից երեք վերստ հեռու գտնուող Ս.-Խաչ վանքի վանահայր՝ ծերունի Ադամ վարդապետի սենեակի պատուհանը, մտել են ներս, մորթոտել են իրեն՝ վանահօրը և կողոպտելով տարել են երկու հազարից աւելի արժողութեամբ փող և ուրիշ իրեղէններ։ Վանքի մարդիկներից ոչ ոք չէ իմացած այդ գիշերը և սենեակից էլ ոչ մի ձայն չէ լսուած։ Այդ երեկոյեան վանքի բակի շները չեն հաչել։ Աւազակներն անյայտ են. ոստիկանութիւնը խիստ միջոցներ է ձեռք առել մարդասպաններին գտնելու համար։

Այս արդէն երկրորդ դէպքն է, որ մեր Ս. Խաչ վանքի վանահայրերն սպանում են։ Առաջինը Ալամդարեան Յարութիւն վարդապետն էր, որ զոհ գնաց 1834-ին, իսկ երկրորդն էլ Ադամ վարդապետն եղաւ։

Կասկածում են, որ խաչագողներն մասն կայ այս սպանութեան գործի մէջ։

Նոյն դէպքի մասին Նոր-Նախիջևանից մեր մի ուրիշ Թղթակիցը գրում է. — Ապրիլի 2-ին քաղաքումս պատահեցաւ մի սարսափելի եղեռնագործութիւն։ Սուրբ Խաչ վանքի վանահայր Ադամ վարդապետին գտան սպանուած իւր մահճակալում։ Ըստ երևոյթին անյայտ չարագործները մտել են վանահօր սենեակը պատուհանից, որը լաւ փակած չէր և միանգամից վերջացրել են իրենց հաշիւները խեղճի հետ, կտրելով նրա կոկորդը։ Դիակի դրութիւնը ցոյց է տալիս, որ քնից զարթած վարդապետը փորձել է ընդդիմանալ չարագործներին և ստանալով մի վէրք ձեռի ափին ընկել է նրանց հարուածների տակ։ Վանահօր սենեակում ամեն ինչ անկարգ թափուած է. պահարանները կոտրած են և թղթերը խառնած։ Դանակը մնացած է սենեակում. սպանութիւնը, ինչպէս երևում է, կատարուած է կողոպտելու նպատակով։

Վրաց «Իվէրիա» Թերթը հաղորդում է, որ Թիֆլիսի և Քութայիսի ազնուականական բանկերը ցանկութիւն են յայտնել միանալու, միայն մի քանի մութ կտորներ հարկաւոր է որ նախ պարզուին. դրա համար մտադրութիւն կայ երկու բանկերի կողմից ընտրելու մի յանձնաժողով երեք-երեք հոգի իւրաքանչիւր կողմից։ Յանձնաժողովի զեկուցումը այնուհետև պիտի քննուի երկու բանկերի վարչութիւնների կողմից։

Վերջերումս տեղական մի Թերթ հաղորդել էր, որ Սևանայ վանքը անյայտ չարագործներ կողոպտել են։ Այդ լուրը հրատարակեցին և տեղական ռուս Թերթերը։ Սևանայ վանքից արժ. Վահան վարդապետ Գէորգեանը Թերթիս խմբագրին ուղղած մի նամակով, որը զետեղուած է սոյն համարի քրոնիկոնի տակ, յայտնում է, որ Սևանայ վանքում կողոպտումն տեղի չէ ունեցել և թէ այդ մասին հաղորդած լուրը բոլորովին անհիմն է։

ԲԱԳՈՒԻՑ. — Ապրիլի եօթին, կէսօրից յետոյ, ղարաբաղցի յայտնի հարուստ Պօղոս Սարգսեանցը իւր տան մէջ ինքնասպանութիւն գործեց ատրճանակով։ Ինքնասպանը հասակով մարդ էր, մօտ 60 տարեկան։ Նա նիւթականապէս ապահովուած, երկու հարիւր հազարից աւել կարողութեան տէր մարդ էր։ Ինքնասպանութեան պատճառը յայտնի չէ. ասում են իբր ընտանեկան հանգամանքներ կան։ Այս կարճ միջոցում, վերջին տասն ամսուայ ընթացքում, հայերից 4 հոգի իրենց սպանել են։ Սա էլ նոր ախտ է և հայերիս համար մօդա է դառնում։

ԲԱԳՈՒԻՑ. — Հոգեկան հիւանդութեան պատճառով ապրիլի 7-ին իւր կեանքին ատրճանակով վերջ տուող վաճառական Պօղոս Սարգսեանի ամուսինը, հանգուցեալի յիշատակը կենդանի պահելու համար նուիրեց 7000 րուբլի բարեգործական նպատակով։ Դեռ չէ որոշուած, թէ որ բարենպատակ հաստատութեան ինչքան մաս պէտք է հանուի այդ գումարից։

Հանգուցեալն Թաղեցին կրօնական ծիսակատարութեամբ, նրա հոգեկան հիւանդութեան մասին բժիշկների վկայութիւնը ստանալուց յետոյ։

Թափիլ Թաղի (Քամոյեանց) եկեղեցին նոր երեցփոխանի ընտրութիւնը կատարուեցաւ և ընտրուեցաւ պ. Բ. Մելիք-Ղարագեօզեանը։ Այս եկեղեցին կառավարվում է ժամուորներով, շատ քիչ ծուխ ունի։

ԴԶԼԱՐԻՑ. — Համարեա մի ամբողջ տարի է, որ քաղաքագլուխ պարոն Կարապետ Սերեբրակեանցը հրաժարուել է իւր պաշտօնից, հաւանական է զզուելով մի քանի երկճիւղ լեզուներից. նրա պաշտօնը կատարում է նրա փոխանորդ պարոն Ոսկան Քալանթարեանցը։ Չնայելով որ քանիցս այդ մասին եղել է ժողովք, բայց քաղաքագլխի ընտրութեան հարցը առ այժմս մնացել է առկախ, ոչ ոք այդ պաշտօնը չէ ցանկանում յանձն առնել։ Խօսք չկայ, որ Քալանթարեանցը յարմար է այդ պաշտօնին, երբև նոր մարդ և փորձուած, բայց որ չի ցանկանում, որպէս և այլք, երևի մէկ «և» կայ այդտեղ։

Փետրվար ամսից դէսը քանիցս ժողովներ է եղած քաղաքային վարչութեան մէջ Թերեքի ափերը ամրացնելու և այգիների ջրանցքների համար ջրվեռներ ընտրելու համար, բայց ժողովրդի անտարբերութեան պատճառով չէ կայացել ժողովքը, որպէս զի լսէր կօմիտէտի տարեկան հաշիւը և անէր պատշաճաւոր կարգադրութիւն. կամայ ակամայ գործը ժողովրդական կերպարանք ստանալու փոխանակ և նրա հաճութեամբ վճռուելու՝ մնում է առկախ։

Շաբաթ օր, ապրիլի 9-ին, երկրիս կառավարչապետի, գեներալիտէտի և բազմաթիւ հոգևորական և աշխարհական անձերի ներկայութեամբ, մուզէումի այգիում կայացաւ Ա. Պ. Բերժէի արձանի բացումը։ Արձանը զարդարած էր կանաչով. արձանի վերայ, հոգեհանգիստ կատարուելուց յետոյ, պ. Դ. Ա. Կոբիակօվը խօսեց մի ճառ, որի մէջ յիշատակեց Բերժէի գործունէութիւնն համառօտակի։ Բերժէն Կովկասի հնագրական ընկերութեան նախագահն էր։ Թէև արձանը պէտք էր նրա գերեզմանի վերայ կանգնեցնէին, բայց նա որպէս տեղական նշանաւոր գործիչ, արժանի էր, որ նրա արձանը կանգնեցնէին այդտեղ։ Նա է եղել Թիֆլիսի հասարակական գրադարանի հիմնողը 1857 Թուին. նա իւր բոլոր ծառայութեան միջոցին ուսումնասիրել է Կովկասը։

Շաբաթ օր, ապրիլի 9-ին, կայացաւ կովկասի բժշկական ընկերութեան տարեկան ժողովը, ուր ներկայ էին երկրիս կառավարչապետը, Վրաստանի էկզարխ Պալլադին, կառավարչապետի օգնական գեն.-ադ. Շէրէմետևը և ուրիշ բարձրաստիճան անձեր։ Այդ ընկերութիւնն արդէն 24 տարի է որ գոյութիւն ունի։ Կարդացուեց ընկերութեան տարեկան հաշիւը։ Ժողովի վերջում ընկերութեան պ. նախագահը շնորհաւորեց Վրաստանի էկզարխի ընտրուիլը ընկերութեան պատուոյ անդամ, խնդրեց, որ այդ կոչումն ընդունի։ Կառավարչապետի ձեռքից նորին Սրբազնութիւնն ընդունեց պատուոյ անդամի դիպլոմը։ Այնուհետև ժողովը փակուեց։

ԲԱԳՈՒԻՑ. — Արդէն բաւական ժամանակ է, որ երկու քահանայացուների խնդիրը զբաղեցնում էր Բագուի հայ հասարակութեան հասկացող մասին և առիթ էր տուել յուզուելու այդ մասին։ Բայց այժմ այդ քահանայացուներից մէկը Զ. անունով, վեհանձնաբար յայտնեց, որ ինքը չէ ուղարկել իւր խնդիրը ս. Առաջնորդին և այսուհետև էլ չէ ուղարկելու՝ քանի որ ժողովուրդը չէ ցանկանում իրեն։ Նա հրաժարվում է քահանայանալու դիտաւորութիւնից և իւր խնդիրը, որը մենք ևս տեսանք իւր ձեռին, թէև բազմաթիւ ստորագրութիւն էր կրում, բայց այնու ամենայնիւ պարոնը թողնում է այսուհետև առանց հետևանքի։

Ցանկալի էր, որ միւս պարոնն էլ օրինակ առնելով իւր ընկերից, նոյնպէս հրաժարուէր քահանայանալու ձգտումից, որին ինքը անարժան է։

Երեքշաբթի, ապրիլի 5-ին, Թիֆլիսի դատական պալատում քննուել է մի հետաքրքիր գործ, բայց դեռ լուծումն չէ ստացել. այդ գործն էր Մինգրելիայի իշխանի բողոքարկու գանգատը Քութայիսի նահանգական դատարանի վճռի դէմ, որով այդ դատարանը հաստատում էր իշխանի քրոջ պրինցէսս Միւրատի պահանջը, որ իւր իրաւունքները ճանաչուեն ստանալու իրենց մօր մահից յետոյ մնացած շարժական կայքի 1/2 մասը, որ հասնում է 600,000 րուբլու։ Այս գործին վերջնական որոշում տալը ձգուած է մայիսի 11-ին։

Նոյն դատարանում, ապրիլի 7-ին քննուել է Ավալով իշխանների բողոքարկու գանգատը Թիֆլիսի դատական պալատի որոշման դէմ, Նորին Մեծութիւն իշխան Միխայիլ Նիկոլաևիչի Բորժոմի կալուածքի մի մասը իրենց սեփականութիւն ճանաչուելու խնդրի առթիւ։

Այս գործն էլ մնացել է անվճիռ. գործի աւարտը, տեղական ռուս Թերթերի ասելով, ձգուած է մինչև մայիսի 5-ը։

ՍԱԼԻԱՆԻՑ. — Շամախու Թեմի սրբազան առաջնորդի արած կարգադրութեամբ՝ յօգուտ Զէյթունի հրկիզեալներին, Գեօկչայի գաւառի հայաբնակ գիւղերից հանգանակուել և ուղարկուել է գերապատիւ առաջնորդ հօրը. Լահիջու գաւառակի առաջին մասն կազմող գիւղերից, շնորհիւ գործակալ Թադէոս քահանայ Տէր-Մարգարեանցի, Աւանաշէն գիւղից 10 ր. 80 կ., Թոբլէշէն գիւղից 6 ր. 55 կ., Քեշխուրթից 11 ր. 10 կ., Գիրքից 16 ր. 25 կ., Գիւլբանից 3 ր., Շուքուրչուից 8 ր., Աչուղ-Բայրամլից և Նորաշէնից 4 ր., Փափաքլուից 5 ր., Գերմախանից 7 ր. 50 կ., Գանձակ գիւղից 6 ր. 50 կ., Քելբանդից 5 ր. 48 կ., գումարն է 84 րուբլի 78 կոպէկ։

Լահիջու գաւառակի երկրորդ մասն կազմող գիւղերից, շնորհիւ գործակալ Մովսէս քհ. Իգրաշեանցի. — Գեօկչայ գիւղաքաղաքից 50 ր., Վանքաշէն գիւղից 24 ր., Ղալակեայից 12 ր. 15 կ., Բոզաւանդից 7 ր., Ուչտալից 17 ր. 50 կ, Աղայիշէնից 4 ր., Ռուշանաշէնից 16 ր. 50 կ., գումարն է 131 րուբլի 15 կոպէկ. Ընդամենը 18 գիւղերից 215 րուբլի. 93 կոպէկ։

Որովհետև հեռու երկիրներում բնակուող տառապեալ արիւնակիցներին օգնութեան ձեռք կարկառելը, մեր գիւղացիների համար հազուագիւտ գործ է, ուստի չէ կարելի ուրախութեամբ չնկատել այս, համարեա թէ առաջին փորձը։

Մօտ օրերս Պետերբուրգում սպասում են եօթ հոգի Ճապօնացիների գալստեան, որոնց նպատակն է ծանօթանալ Ռուսիայի հետ։ Պետերբուրգից նրանք ուղևորուելու են Մոսկվա և այնուհետև կուղևորին Վօլգայի վրայով, կայցելեն Կովկաս ու Սև ծովի ափերը։ Նրանց ուղևորութիւնը, մայրաքաղաքի ռուս Թերթերի ասելով, նպատակ ունի Ռուսիայի մասին աշխարհագրական և տեղագրական տեղեկութիւններ հաւաքելու։

Կիրակի, ապրիլի 10-ին, վրաց ազնուականների բանկի Թատրոնում հայ խումբը ներկայացրեց «Սամուէլ» կենդանի պատկերներով։ Խումբի մի քանի անդամները կարդացին, երգեցին և պատմեցին։ Ասիական նուագածուների խումբը ածում էր և երգում՝ առանց խնայելու ոչ իրենց կոկորդն և գործիներն և ոչ էլ հանդիսականների ականջներն։

Այդ երեկոյեան աւելի հետաքրքիր մասը կարդացած և երգուած մի քանի կտորներն էին, որոնք բաւական աջող անցան։

Բայց չենք կարող չնկատել, որ ընթերցանութեան համար պէտք է մի փոքր աւելի լաւ ընտրութիւն անել։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

... խմբագիր։ Անցեալները Թիֆլիսի մի քանի լրագիրների մէջ որպէս ճշմարիտ եղելութիւն հաղորդուած էր, որ իբր անյայտ չարագործներ Սևանայ վանքի Թանգարանից գողացել են Թանկագին իրեղէններ։ Ուստի, Թոյլ տուէք… խմբագիր, պատուական «Նոր-Դար»-ի միջոցով յայտնելու, որ այդպիսի բան պատահած չէ այստեղ՝ Սևանում։

Յուսալով, որ չէք մերժիլ մի անկիւն շնորհելու սոյն նամակիս,

....ի դիմաց վանուցս միաբան եղբայրների

Միաբան Սևանայ վանուց
Վահան վարդապետ Գէորգեան։

6 ապրիլի 1888 Թ.
Սևանայ վանք.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԳԵՐՄԱՆԻԱ. — «Նոր-Դար»-ի ստացած սեփական հեռագիրներից, որ զետեղում ենք ներկայ համարում, ընթերցողը պիտի տեսնէ, որ Գերմանիայի համար արագ քայլերով մօտենում է օրհասական վայրկեանը։ Գերմանական Ֆրիդրիխ կայսրը, որ հազիւ է գահ բարձրացել, արդէն խոնարհում է դէպի իւր մուտքը. Նրա տկարութիւնն այն աստիճան սաստկացել է, որ ոչ միայն օր օրի վերայ, այլ վայրկեան ու վայրկեան սպասում են նրա մահուան. արիւնը սկսուել է փըչանալ, շնչառութեան համար յարմարեցրած արծաթէ խողովակը հասցրած է մինչև բրօնխները, այսինքն Թոքից մինչև այն մասը, ուր դա ճիւղաւորվում է անհամար մասերի, ուրիշ խօսքերով, այլ ևս տեղ չկայ խողովակը երկարացնելու. կոկորդի ուռոյցքը աւելանում է, տենդը ահա մի շաբաթ է, որ տանջում է նրան և նա մինչև անգամ այն դրութեան մէջ է եղել, որ չէ ճանաչել իւր շրջապատողներին. պետական մինիստրների զեկուցումները Թագաժառանգն է լըսում. Մի խօսքով խիստ վտանգաւոր է, անխուսափելի է ցաւալի վախճանը։

—Ֆրեդրիխ կայսրը Թէև իւր կարճ իշխանութեան միջոցին մի նշանաւոր բան չարեց, բայց նրա ձգտումները, նրա խոստումները շատ բան էին ըսպասել տալիս. եԹէ չլինէր նրա տըկարութիւնը, Գերմանիան, գուցէ նոյն իսկ աշխարհքը շատ բան պիտի տեսնէր լաւ։ Զարմանալի քաջութիւն, հոգու անդորրութիւն ցոյց տուեց կայսրը իւր տկարութեան միջոցին։ Մի կողմից պատերազմում է մահու չափ վտանգաւոր հիւանդութեան հետ և միւս կողմից աշխատում է կառավարել երկիրը սարսափելի խոչընդոտների հետ կռուելով։

—Ասում են, որ կանցլէրային տագնապը վերջացել է առանց պրինց Բատտենբերգի և պրինցէսս Վիկտորիայի ամուսնութեան նախագիծը մի կողմ ձգած կամ մոռացութեան տուած լինելու. ասում են մի քանի բարձրաստիճան անձեր երաշխաւոր են եղել պրինց Բատտենբերգի քաղաքական գործերից հեռանալուն համար։

ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ.—Վիէննայում Սոֆիայից հաղորդում են, որ իբր Թէ ժողովուրդի դժգոհութիւնն աչքի առաջ ունենալով բուլղարական ներկայ կառավարութիւնից, պրինց Ֆերդինանդը վախենում է իւր կեանքի դէմ դաւեր լարուելուց, ուստի նա պալատից դուրս գալու միջոցին, իբրև Թէ հասարակ քաղաքացու շորերով է դուրս գալիս։

—Բուլղարիայից աւստրիական Թերթերին հաղորդում են, որ Շումլայում զինուորական խռովութիւն է բարձրացել։

Պրինց Ֆերդինանդը բազմաթիւ նամակներ է ստանում սպառնական բովանդակութեամբ։

—Բուլղարական մի մասնաժողով ուղևորել է Պեստ՝ բուլղարական կառավարութեան պատուիրած հեծելազօրային պարագաները ստանալու համար։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Աղքատ-բանկիրը.—Ռուսաց «Осколки» ծիծաղական Թերթի մէջ նկարուած է մի պատկեր, որ ներկայացնում է մի բարերար տիկնոջ, որին մօտեցել են ցնցոտապատ երկու աղքատներ։

—Այ, հանդիմանական ձևով ասում է տիկինը, այսօր արդէն երկու հոգով եկաք, մինչդեռ առաջ միայնակ էիր գալիս, այսօր մի ուրիշն էլ ես ետևիցդ քաշ տուել։

—Բայց ես, տիկին, այլ ևս ողորմութիւն չպիտի խնդրեմ։ Ես արդէն այդ վերջացրի և գործը ծախեցի սրան (ցոյց տալով իւր պաշտօնակցին)։ Ահա այժմ նրան ման եմ ածում և ցոյց եմ տալիս ծանօԹ տեղերը։ Իսկ ես ինքս ցանկանում եմ բանկային գրասենեակ բանալ։ Բաւական հաւաքել եմ... Այս բանը, ասենք, այնքան էլ հեռու չէ ճշմարտութիւնից։ Քիչ աղքատներ չեն պատահել, որոնց մահից յետոյ մեծ գումարներ են մնացել։

* *

Մի կտակ.—Վիէննայում մօտերս վախճանուեց մի պառաւ կին, որ Թողել է մի կտակ, որով իւր ունեցածին 20,000 գուլդէն կտակում է էրցհերցոգ Ալբրեխտին։ Նա իւր այդ կտակը բացատրում է նրանով, որ էրցհերցոգը իւր յաղԹանակով Կուստոցցի մօտ, իրեն «անձնական մեծ հաճոյք» է պատճառել։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 Ապրիլի.—Զէմստվային հաստատութիւնների բարեփոխութեան նոր նախագծով մտադրութիւն կայ զէմստվօներին Թողնել՝—զէմստվային անշարժ կալքերի գումարներ և բարեգործական հաստատութիւնների կառավարութիւնը, ժողովրդային առողջութեան պահպանութիւնը, զէմստվային շէնքերի կառուցումն ու նրան կառավարելը, ժողովրդական կրթութեան մէջ մասնակցութիւնը։ Զէմստվօները պէտք է պարտադիր կարգադրութիւններ անեն, որոնք օրէնքի ոյժ են ստանալու նահանգապետից հաստատութիւն ստանալուց յետոյ։ Նահանգապետներին իրաւունք է տրվում յանկարծական քննութիւններ անելու զէմստվային հաստատութիւնների մէջ։

Գինիները կեղծելու պատճառով, օրինագիծ է մշակվում գինեվաճառութեան վերայ հսկելու համար։ Գինեգործներն ու գինեվաճառները, բացի քրէական պատժից, պիտի ենԹարկուին և դրամական նշանաւոր տուգանքի՝ անունները լրագրների մէջ ևս հրատարակելով։

Մալցեվի Բրեանսկի գործարանների ընկերութիւնը սնանկ է հրատարակուած։

ՊԱՐԻԶ.—Բուլանժական ցոյցերը երէկ ամբողջ գիշերը շարունակուեցան, մանաւանդ Մօնմարտ փողոցում, «Cocard» Թերթի խմբագրութեան գրասենեակի առաջ և նրա շուրջ բուլվարներում։ Մի քանի հոգի ձերբակալուեցան, բայց յետոյ կրկին արձակուեցան։ Ծանր դէպքեր չպատահեցան։

«Correspondence de L'Est»-ին Բեռլինից հեռագրում են այս առաւօտուանից, լրագրի ասելով, ստոյգ աղբիւրից. «Գերմանական կայսրի հիւանդութիւնը մտաւ իւր վերջին ճգնաժամը. սկսուեց կայսրի արեան փտումն. Նորին մեծութիւնը կէս նստած դրութեամբ մնում է հանգստանոցի վերայ. շընչառութիւնը դժուարացել է. օդանց խողովակը իջեցրած է մինչև բրօնխները, իսկ նոր ուռոյցքը սպառնում է ծածկելու խողովակի ներքին մասը. Հացընդունարանն արդէն վնասուած է. հիւանդի ջերմութիւնը տատանվում է 38 և 39 աստիճանների մէջ. կայսրի տենդը կիրակի օրից չէ անցնում։

ԲԵՐԼԻՆ.—Պաշտօնական բիւլլէտէնում երէկ երեկոյից հաղորդուած է, որ օրուայ ընԹացքում կայսրը բաւական լաւ զգաց իրեն, բայց երեկոյեան տենդը աւելացաւ և շնչառութիւնը դժուարացաւ։

ՊԱՐԻԶ.—Պատգամաւորների ժողովում կազմվում է հասարակապետական մի նոր կուսակցութիւն, որ ձգտում է մօտենալ Բուլանժէին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Ռուսահպատակութեան խնդրի մասին, մասնաժողովն ընդունեց Վարշավայի ընդ.-նահանգապետի առաջարկը՝ արտասահմանում ապրող ռուսահպատակների համար 10 տարուանից յետոյ ռուսահպատակութեան իրաւունքը կորցնելու մասին։

ՊԱՐԻԶ. Մօտ 1000 հոգի ուսանողներ, որոնք երէկ երեկոյեան մասնակցեցին Բուլանժէին հակառակ ցոյցերին, պատահեցան Բուլանժէի կուսակից աւելի բազմաթիւ ամբոխի. պատահեցաւ կռիւ, որի միջոցին 30 ուսանողներ վիրաւորուեցան, ի Թիւս որոնց մի քանիսը բաւական ծանր կերպով։ Հաստատում են, իբր ուսանողներն այսօր երեկոյեան կամենում են կրկնել հակա-բուլանժական ցոյցը։

Օպպօրտիւնիստների օրգան «République Française»-ը իւր համախոհներին համոզում է քուէարկել սահմանադրութեան վերաքննութեան դէմ. բայց որովհետև աջակողմեանները, ըստ երևոյթին, որոշել են քուէարկել վերաքննութեան օգտին, ուստի պէտք է սպասել, որ պատգամաւորների ժողովում մեծամասնութիւնը վերաքննութեան կողմը կլինի։

ՊԱՐԻԶ.—Սահմանադրութեան վերաքննութեան համար պարլամէնտական մասնաժողովն արդէն կազմուեց՝—չորս հոգի վերաքննութեան դէմ, 2 հոգի անմիջապէս վերաքննութիւնն պահանջող և հինգ հոգի էլ Թէև վերաքննութիւնը ցանկացող, բայց մինիստրութեան հայեցողութեան համեմատ, վերաքննութիւնը յետաձգելու պատրաստ անձերից։

ՊԱՐԻԶ, 10 Ապրիլի.—Երէկ ուսանողները կրկին հակա-բուլանժական ցոյց արին, բայց կռիւ չպատահեց։

Պատգամաւորների ժողովում և սենատում ռադիկալական պրեֆէկտին մեղադրեցին աչառութեան մէջ և պնդեցին, որ նա խնայում է հակա-բուլանժականներին։ Պատգամաւորների ժողովում պրեֆէկտը և սենատում Ֆլօկէն բողոքեցին այդպիսի մեղադրանքների դէմ. Ֆլօկէն աւելացրեց, որ անհրաժեշտ է անկարգութիւններին վերջ դնել, որովհետև հակառակ դէպքում բանը կարող է արիւնահեղ խռովութեան հասնել։ Կրկին սենատում Ֆլօկէն պատասխանելով իրեն եղած հարցին, պատասխանեց, որ սահմանադրութեան վերաքննութեան համար անհրաժեշտ է սենատի հետ համաձայնել և Թէ վերաքննութիւն ասելով նա հասկանում է սահմանադրութեան բարեփոխութիւնը. եԹէ առաջարկուի եկեղեցին բաժանել կառավարութիւնից, այդ խնդրի ազատութեան վերայ ընդունելու համար չի լինիլ. սենատի մէջ մտցնելու բարեփոխութիւնների խնդիրը նախ և առաջ պիտի ենԹարկուի իրեն սենատի քննութեան։ Ի վերջոյ Ֆլօկէն ասաց, որ հասարակապետութեան սպառնացող վտանգի առաջն առնելու համար անհրաժեշտ է ռամկավարական եռանդ արտայայտել և ապացուցանել, որ պարլամէնտական հաստատութիւնների ազատ գործադրութեամբ երկիրը կարող է հասնել այն բանին, ինչ որ նա փնտրում է դիկտատորութեան մէջ։

ԲԵՐԼԻՆ.—Վերջին օրերս Թագաժառանգը ընդունում է իշ. Բիսմարկին և ուրիշ մինիստրներին զեկուցումներով։ Պրինցը իւր բրիգադի գլուխ անցած մարզութիւնից վերադառնալիս, հասարակութիւնն անդադար համակրալից ցոյցեր է անում։

Այստեղի «Ռուսական Թղթակցութիւնը» հերքում է «Köln. Zeit.» հաղորդած տեղեկութիւնը, Թէ ռուսական ֆինանսների մինիստրութիւնը Բեռլին վաճառելու համար ուղարկել է արևելեան փոխառութիւնը։

ՎԻԵՆՆԱ.—Բեռլինից ստացուած մանաւոր տեղեկութիւններին նայելով, օր օրի սպասում են Ֆրիդրիխ կայսրի մահուան. գիտակցութիւնը Թուլանում է. երէկ նա դժուարութեամբ ճանաչեց կայսրուհուն։

ՀՌՈՄ.—Պապն ընդունելով 800 լեհ և գալիցիա-ռուսական ուխտաւորների, ցանկութիւն է յայտնել, որպէս զի եկեղեցական իւրաքանչիւր ծէս պահպանէ իւր աւանդականութիւնն և օրինական] կարգերը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Նոցին Կայսերական Մեծութիւնները Օգոստափառ երեխաների հետ հաճեցան Գատչինօ տեղափոխուել։

Ինչպէս լսվում է, մինիստրների կոմիտէն հաստատել է երկաթուղային տեղական վերահսկողութիւնը հետևեալ գծերի վերայ՝—Գըլխաւոր ընկերութեան, Դինաբուրգ—Վիտեբսկի, Րիգա-Պսկովի, Շուրշվիլինեան, Իվանգորոդ-Դոմբրովսկի, Լօձի և Անդրկովկասեան գծերի վերայ։

Աչքի առաջ ունենալով գիւղացիների հողազուրկ լինելը, պետական խորհրդին առաջարկուած է մի նախագիծ, որով գիւղացիներին արգելուելու է բաժանուել հասարակութիւնից և նրանց հողերից ոչ մի պահանջ (վզիսկանիէ) չանել, բացի հարկերից։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

9 Ապրիլի։

Լօնդօն	122, ր., 121,3 ր., 121,8 ր.,		
Համբուրգ	60, 59,7 ր.,		
Պարիզ	48,1 ր., 48 ր.,		
Պօլուիմպերիալ .	9 ր.	73 կ.	սակ.
Մաքս. կուպօն	$193^{1}/_{2}$ ր.	— կ.	սակ.
Արծաթ	1 ր.	41 կ.	սակ.
Բօրսային զխս. —			
Պետակ. բանկի 5%			
1-ին շրջանի. .	$99^{1}/_{2}$ ր.	— կ.	սակ.
2-րդ	$98^{1}/_{2}$ ր.	— կ.	սակ.
3-րդ	$98^{1}/_{4}$ ր.	— կ.	գն.
4-րդ	$98^{1}/_{4}$ ր.	— կ.	գն.
5-րդ	$98^{1}/_{4}$ ր.	— կ.	գն.
6-րդ . . . . . —			
Վերջին 4% փոխառութիւնը . .	83 ր.	— կ.	սակ.
100 և 1000 արևելեան փոխառութեան 5% տոմսեր,			
1-ին շրջանի .	$99^{1}/_{4}$ ր.	— կ.	սակ.
2-րդ	98 ր.	37 կ.	սակ.
3-րդ	$98^{1}/_{4}$ ր.	— կ.	սակ.
Առաջին 5% ներքին փոխառութեան			
տոմսեր . . .	$266^{3}/_{4}$ ր.	— կ.	սակ.
2-րդ	$242^{3}/_{4}$ ր.	— կ.	սակ.
$5^{1}/_{2}$% րէնտեր .	103 ր.	— կ.	ծ.
Ոսկէ րէնտ . .	$199^{3}/_{4}$ ր.	— կ.	սակ.
Թիֆ. քաղ. վարկի ընկեր.			
օբլիգ.	— ր.	— կ.	սակ.

Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը խաղաղ է։

Խմբագիր-Հրատարակիչ

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Երթևեկութիւն «Թիֆլիս» կայարանում

Գնում է

Բաթում, պօստային.	8 ժ.	49 վ.	առ.
Բագու, ,,	10 ժ.	46 վ.	եր.
Սուրամ, ապ. մար. գն.	3 ժ.	21 վ.	ց.
Աղստաֆա, խառն գն.	8 ժ.	20 վ.	առ.

Գալիս է

Բաթումից, պօստ.	10 ժ.	15 վ.	եր.
Բագուից, »	8 ժ.	6 վ.	առ.
Սուրամից, ապ. մարդ.	8 ժ.	24 վ.	առ.
Աղստաֆայից, խ. գն.	8 ժ.	18 վ.	եր.

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Շոգենաւային երթևեկութիւն Բաթումի, Օդեսսայի և Կ. Պօլսի մէջ։

Բաթումից գնում է

Հինգշաբթիները.—Կէս օրուայ ժամը 4-ին, ուղիղ գծով, Նովօրօսիյսկի և Կերչի վերայով։

Շաբաթ օրերը.—Երեկոյեան 8 ժամերին, շրջանառու ընԹացքով, բոլոր նաւահանգիստները պատահելով։

Երկուշաբթիները.—Երեկոյեան արտասահմանեան գնացքով Կ. Պօլիս։

Բաթումից գալիս է

Երեքշաբթիները.—Կէս գիշերուայ մօտերքը, Օդեսսայից, շրջանառու ընԹացքով։

Ուրբաթները. — Առաւօտը, Օդեսսայից, ուղիղ գծով՝ Կերչի և Նովօրօսիյսկի վերայով։

Շաբաթ օրերը.—Առաւօտը Կ. Պօլսից։

Փօթիից գնում է Բաթում

Երկուշաբթիները.—Սուխումից շրջանառու նաւը նաւահանգիստ գալուց յետոյ։

Հինգշաբթիները. — Առաւօտեան ժամը 9-ին, Ղրիմ-Կովկասեան ուղղագիծ շոգենաւին միանալու։

Շաբաթ օրերը. — Առ. ժամը 9-ին, Ղրիմ-Կովկասեան և Ռումէլիա-Անատօլեան շրջանառու շոգենաւին միանալու։

Բաթումից գնում է Փօթի

Ուրբաթ և կիրակի օրերը.—Նաւի դուրս գնալու ժամը որոշվում է Բաթումի նաւային գործակալութիւնից՝ նաւը Փօթիից գալուց յետոյ։

Բացի այդ, ամեն շաբաթ Փօթի գալիս են Օդեսսայից և Ղրիմ-Կովկասեան գծի նաւահանգիստներից որոշեալ ժամանակի ապրանքակիր և մարդակիր խառն նաւեր՝ կիրակի օրերը երեկոյեան և գնում են Բաթում՝ երեքշաբթի օրերը, իրենց գործառնութիւններն վերջացնելուց յետոյ, իսկ Բաթումից՝ ուրբաթ օրերը երեկոյեան, որ մտնում է Ղրիմ-Կովկասեան նաւահանգիստները, եթէ կարիք լինի, մտնում է և Փօթի։

Վաճառվում են

ԱՆՎՏԱՆԳ

ՇՎԵԴԱԿԱՆ

ԼՈՒՑԿԻՆԵՐ

(ШВЕДСКІЯ СПИЧКИ)

Կատարելագործուած, սպիտակ բոցով, ամենաէժան գներով։ Մեծ քանակութեամբ առնողներին մեծ զիջումն է լինում։

ԳՈՐԾԱՐԱՆ Գ. Ի. ՏԷՐ ԱՍԱՏՈՒՐՈՎ ԵՒ ԸՆԿ.

ԹԻՖԼԻՍ. Վերայում.

50—45

Արդէն լոյս տեսաւ

ՏՄԲԼԱՉԻ ԽԱՉԱՆԻ

Ֆէյլիետօնները

Առանձին գրքոյկով՝ փոփոխած և աւելացրած, ԽԱՉԱՆԻ լուսանկար պատկերով։ Վաճառվում է՝—ԲԱԳՈՒ պ. Տիգրան Ղոնդաղսազեանի մօտ, ՇՈՒՇԻ — Հոգևոր Տեսչութեան տպարանում, ԹԻՖԼԻՍ պ. Եփ. Ծատուրեանի լամպաների մագազինում Ս. Աղամալեանցի մօտ և ԴԱՐԲԱՆԴ—պ. Կ. Մելիք Շահնազարեանի մօտ։

Գինն է պատկերով 45 կոպ.։

առանց պատկերի 35 կոպ.։

(Ա.) X—19

Վրաստանի և Իմերէթի հայոց վիճակային Կոնսիստորիայի Ատենի մէջ նշանակուած է աճուրդ 15-ին Ապրիլի սոյն ամի, առանց կրկնաճուրդի, կապալաւ տալոյ համար էջմիածնապատկան տունն, որ գտնվում է Մուխրանեան փողոցի վերայ։

Անդամ Կոնսիստորիայի Յովհաննէս վարդապետ Տէրակունի։

3—1

Дозволено цензурою. Тифлисъ, 11-го Апрѣля 1888 г. Տպարան Լ. Գ. Կրամարէնկոյի Типографія Л. Г. Крамаренко, Гол. пр., д. Читахова.